Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ ԹԻՎ 6-Ա, 7-Ն-9-Ն, 10-Ա, 11-Ա, 12-Ն, 13-Ա-15-Ա, 16-Ն, 17-Ա ԵՎ 18-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 6-Ա որոշման վերնագրում և 1-ին կետում անհրաժեշտ է «նիստի» բառից առաջ գրառել «արտահերթ» բառը, նիստի անցկացման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը:

Թիվ 7-Ն որոշմանը կից դիմումը և տեղեկանք-հիմնավորումը ներկայացնելու անհրաժեշտություն չկար:

Թիվ թիվ 8-Ն և 9-Ն որոշումներին կից թիվ թիվ 1, 2 հավելվածները, տեղեկանք-հիմնավորումները և տեղեկանքները ներկայացնելու անհրաժեշտություն չկար:

Թիվ 12-Ն որոշման 1-ին կետով հաստատված N 1 և N 2 հավելվածների դրույթների համարակալումը սխալ է կատարված:

Թիվ 14-Ա որոշումը համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 1-ի թիվ 9-Ա որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել:

Թիվ 15-Ա որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի դրույթների համարակալումը սխալ է կատարված:

Թիվ 16-Ն որոշման մեջ ներառված չէ համայնքի ղեկավարի 2022 թվականի բյուջետային ուղերձը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթների՝ համայնքի ղեկավարն ամփոփում է սահմանված ձևերով ներկայացված տվյալները և կազմում համայնքի բյուջեի նախագիծը, որը բաղկացած է համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձից և համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծից:

Համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը, համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի դրույթների՝ իր մեջ ներառում է բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղությունները, ինչպես նաև համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի վերաբերյալ 7-րդ մասի «գ», «դ», «ե», «զ», «է» «թ» «ժ» կետերով նախատեսված հիմնավորումները:

Որոշմանը կից ներկայացված N 1 հատվածում՝

- Գույքահարկ փոխադրամիջոցների գծով տարեկան նախատեսվել է գանձելու 49920.0 հազ.դրամ, սակայն ըստ ներկայացված փաստաթղթերի՝ «Բազայի» 51973.0 հազ. դրամ է կամ պակաս է նախատեսվել 2053.0 հազ.դրամ:
- Տեղական տուրքերի գծով տարեկան նախատեսվել է գանձելու 3499.5 հազ.դրամ, սակայն ըստ ներկայացված հաշվարկի կազմել է 2848.0 հազ.դրամ, կամ ավել է նախատեսվել 651.5 հազ.դրամ:
- 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ հողի հարկի գծով ապառքը կազմում է 113758.0 հազ.դրամ, իսկ գույքահարկի գծով ապառքը՝ 31597.0 հազ.դրամ, որից փոխադրամիջոցներ՝ 26299.0 հազ.դրամ, շենքեր ու շինություններ՝ 5298.0 հազ.դրամ: Անհրաժեշտ է համայնքի 2022 թվականի բյուջեում ներառել նշված ապառքները:

Թիվ 17-Ա որոշման 2-րդ կետի դրույթները սխալ են համարակալված:

Որոշումներում անհրաժեշտ է գրառել որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների միայն ազգանունները (հիմք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մաս):

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
03.03.2022թ.